

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՍՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրության մեջ:

Օտարադպրացիքը գիտնում են ուղղակի
Тифлис. Редакция „Менк“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւնը ընդունվում է առնէ լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանիւր ըստին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աւելի վառ:—Ն ե ր ք ի ն տ ե ս ու թ իւ Ն: Պ.
Աւելցնողը Արարաշխանցին: Նամակ Բայ-Շորա-
գալից: Նամակ Գարայից: Նամակ Նուխուց:
Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Ա ր տ ա ք ի ն
տ ե ս ու թ իւ Ն: Միտա Չերազի ճառը: «ГОЛОСЪ»
լրագրի թղթակցութիւնը:—Ցայտարարութիւններ:

Ս.ԻՆԵԼԻ ՎԱՏ

«Մշակի» երէկվայ համարում
մենք արտատպեցինք «ГОЛОСЪ»
լրագրից մի յոգուած հրէաների
բացատրական դրութեան մասին
նուազ իրաւունքների առջև:
Ուստաց հասարակական կարծի-
քը պահանջում է այժմ որ հրէ-
աներն էլ, որոնք ուրիշ ցեղին
են պատկանում, քան թէ ուս-
ները, նոյն իրաւունքներ վայե-
լին, ինչպէս և բուն ուս քա-
ղաքացիները:

Իսկ մենք, երբ յարուցեցինք
այն միտքը, թէ աչքի առջև
ունելով որ այսօր կամ վաղը
թիւրքաց Հայաստանը ստանա-
լու է մի տեսակ ինքնավարու-
թիւն, որեմն պէտք է պատ-
րաստվի այդ ինքնավարութեան
արժանաւոր կերպով վայելելուն,
հայերը իրանց բոլոր այլադաւան
եղբայրներին պէտք է իրանց հետ
հաւասար իրաւունքներ վայելող
քաղաքացիներ ճանաչեն,—գտն-
վեցան խաւարասերներ և ազգին
մոլորեցնողներ, որոնք սկսեցին
մեղադրել մեզ թէ մենք կրօնա-
փոխութիւն ենք քարոզում:

«ГОЛОСЪ» անհրաժեշտ է հա-
մարում ուս հրէաների համար
բուն ուսաների հետ հաւասար
քաղաքական իրաւունքներ,—
ի՞նչ կասէիք եթէ գտնվէին մար-
դիկ, որոնք մեղադրէին ուս
թերթը, թէ նա կրօնափոխու-
թիւն է քարոզում ուսաների մէջ,
կամենում է որ բոլոր ուսները
մոլորեցնողներ ընդունեն....

Եւ ուս թերթը ցանկանում
է որ նոյն իրաւունքներ վայելէին
այնպիսի քաղաքացիներ, որոնք ցե-
ղով էլ տարբեր են ուսներից,
այն ինչ մենք համարձակվեցանք
ասել թէ հայը, լինի նա կա-
թօլիկ, բողոքական, յունադա-

ւան, կամ մաշմետական, պէտք
է լուսաւորչական հայի հետ հա-
ւասար իրաւունքներ վայելի
թիւրքաց Հայաստանում: Վաղը
թիւրքիայի հայը պէտք է ապրի
իր ինքնուրոյն վարչական կեան-
քով, իսկ այսօր նա հալածում
է իր համաքաղաքացուն և ոչ
թէ մի որ և է ուրիշ ցեղին
պատկանող անհատին, այլ իր
ցեղակից, արինակից եղբորը,
հային,—միայն այն պատճառով
որ սա ուրիշ կրօնին է պատկա-
նում:

Ուս լրագիրը պահանջում է
որ ուսը հրէային էլ ուս
ճանաչի, իսկ հայը հրէշաւոր բան
է համարում, երբ մենք նրան ա-
ռաջարկում ենք հային հայ ճա-
նաչել....

Մենք կրկնում ենք, մեր յա-
րուցած խնդիրը գլխաւորապէս
վերաբերվում էր թիւրքաց Հա-
յաստանին: Թիւրքիայի հայը
այսօր դեռ չունի ինքնուրոյն քա-
ղաքական կեանք, բայց վաղը նա
այդ դրութեանը կարող է հաս-
նել, որեմն ժամանակ է նախա-
պատրաստել նրան այն մարե-
րին, որոնք իմք են ամեն ինք-
նուրոյն քաղաքական կեանքի,
ժամանակ է արդէն համոզել նը-
րան որ մինչև այժմ հայերը ազ-
գութիւն չէին, այլ աղանդ
էին, իսկ աղանդ լինելով նրանք
անընդունակ կը լինեն վայելել
վարել այն ինքնավարութիւնը,
որ արվելու է թիւրքաց Հայաս-
տանին:

Ուս լրագիրը, խօսելով հը-
րէաների մասին ասում է. երբ
որ կամենում էք որ բոլոր քա-
ղաքացիները հաւասար պարտաւո-
րութիւններ կրեն, պէտք է որ
նրանք հաւասար իրաւունքներն
էլ ունենան: Հրէան պէտք է
արին թափի, պէտք է հարկերը
վճարի ուսաների հետ հաւասա-
րապէս, բայց չունի ուսների
հետ հաւասար քաղաքացիա-
կան իրաւունքներ:

Նոյն բանը և մենք ենք ա-
նում: Հայաստանի սովի ժա-

մանակ եթէ հայ-բողոքականնե-
րը կամ հայ-կաթօլիկները հրա-
ժարվէին փող տալ յոգուտ սո-
վատանջների,—մենք վրդովւած
կը լինէինք, կասէինք մի՞թէ
նրանք հայ չեն համարում ի-
րանց, որ չեն կամենում օգնել
հայերին: Բայց երբ բանը գալիս
է նրանց իրաւունքների, մենք
ասում ենք նրանք ի՞նչ հայեր
են, նրանք ուրիշ կրօն են դա-
ւանում և չը պէտք է մեզ պէս
իրաւունքներ ունենան: Հայ լի-
նելու համար նրանք պէտք է
լուսաւորչական դաւանութիւնն
ընդունեն:

«ГОЛОСЪ» լրագիրը գանգատ-
վում է, որ ուսը միայն այն
ժամանակ հրէային ուս քաղա-
քացի է համարում, երբ սա
մոլորեցնող կրօնից անցնում է
դէպի ուսաւորական եկեղեցին:
Իսկ հայը պատրաստ է մինչև
անգամ թիւրքին, քիւրդին հայ
համարել, եթէ սրանք ընդունեն
լուսաւորչական կրօնը, բայց իր
եղբոր հային, որ ուրիշ կրօնին
է պատկանում, հրաժարվում է
հայ համարելուց:

Բաւական չէ որ այդ հրէշա-
ւոր հայեացքը կայ արդէն հայե-
րի մէջ, հայ ամբողջի մէջ, բայց
կան լրագիրներ, հասարակական
կարծիքի առաջնորդներ են, որ
որոնք այնքան յանցաւոր են, որ
աւելի էլ զրգուում են հայի մէջ
այդ հրէշաւոր, հակաազգային
մոլեռանդութեան զգացմունքը:

Հատ ժամանակ չի անցնի,
և հայոց ազգը կը հասկանայ որ
ազգութիւն բանդողը այդ տե-
սակ լրագիրներն են, որ դառ-
նազգեստ գայլերը այդ հասա-
րակական առաջնորդներն են:
Եւ ապագայ սերունդը անէծք
կը կարգայ նրանց յիշատակին,
որովհետեւ նրանք կրօնի և եկե-
ղեցու անտունով ջանում էին քան-
դել ազգութեան ամբողջու-
թիւնը:

Մեր դրօշակի վրա գրված է
ազգութիւն, սէր, եղբայրու-
թիւն, լոյս, առաջադիմութիւն

և ընդհանուր մարդկային քա-
ղաքակրթութիւն բառերը:

Իսկ նրանց դրօշակի վրա
գրված է՝ աղանդ, ատելու-
թիւն, խաւար, յետադիմութիւն,
ազգութեան կործանումն բա-
ռերը:

Թող ազգը ընտրի այդ դրօ-
շակներից մինը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ. ԱՂԷԲՍԱՆԻ ԱՐԱՐԱՋԱՆՑԻՆ

«Մշակ» 140 №-ում կարդալով ձեր
երկար և ձիւ նամակը ուսումնարանից մա-
սին «Փորձի» միջով իմ առած մի քանի
տեղեկութիւնների վերաբերութեամբ, աւե-
լորդ չեմ համարում ձեզ պատասխանել Կը նե-
րէք որ իմ պատասխանը կարծ կը լինի և այն
հարցերի վրա միմայն, որոնք կայ ունին
ուղղակի ձեր ուսումնարանի և ոչ ձեր ան-
ձի կամ ձեր համարմունքին հետ: Չարաւար
սխալվում էք, պարոն, կարծելով թէ ես ան-
ցեալ տարի ձեր ուսումնարանը ներս մտնե-
լով, ինձ համար նպատակ ունէի ձեր անձը
կամ ձեր վարկը: Նոյն օրը միմայն առա-
ջին անգամ ես պատիւ ունեցայ ծանօթա-
նալ ձեր եղբորը Պ. Մկրտիչ Արապաջեանցի
հետ: Չարաւար սխալվում էք նմանապէս
կարծելով թէ ես իմ գրածները կը հիմնէի
«Օտար և ըստ երեւոյթին պերճախօս (ու-
ղում էք ասել ստալօս)» պարոնից հաղոր-
դած տեղեկութեանց վրա: Այն պարոնը,
որի հետ ես մտայ ձեր ուսումնարանը աւե-
լի ազնիւ է, քան որքան դուք կարծում էք:
Բայց ի՞նչ հարկաւոր է ձեր կողմից այդ
ողայական պատճառաբանութիւնը, մինչդեռ
փաստը ինքն իրան է կոտորում: Ահա իմ պա-
տասխանը:

Ա. Ձեր դպրոցի բացման 1863 տարե-
թիւը դպրոցի դրան ճակատի տախտակից
ես կարդացի, բայց եթէ օխալմամբ Ծ-ը ես
Զ-ի տեղ եմ կարդացել, այն ժամանակ հա-
ղար ներողութիւն իմ թղթ աչքերի կողմից:
Բ. Վ իմակալի կոչվելու համար չեք, որ
ես իմ ճանապարհորդութեան ժամանակ
տեղեկութիւններ էի հաւաքում, բայց եթէ
իմ հատուկոր տեղեկութիւնները անձա-
մասամբ անհիմն և վայր ի վերջ են հա-
ճեցէք ուղղել: Այդ մասին էլ չնորհապարտ
կը լինեմ:

Գ. Հառ ուրախ եմ, որ ձեր դպրոցը «իւր
16 ամեայ (1881 թուին կը լրանայ) գոյու-
թեամբ տուել է հասարակութեանը հարկիւր
և քան» փոքր ի շատ զարգացած մարդիկ
նիթէ այդ այդպէս է, այն ժամանակ երեք
դասարանից բաղկացած ութ տարուայ կրա-
թիական դիմնադրոյի կուրսով ձեր ուսումնա-
րանին դուք տեղի տա ր ր ա լ ա ն անուն էք
տուել: Ես կարծեմ աւելի լաւ կը լինէր այդ
ուսումնարանը անունել Ալեքսանդրօպօի
կեցծն:

9.

ՆԱԽԱԿ ԽՈՐԱԳԻՐԻՆ

Դավթի, 23 օգոստոսի

Մշակի 131 համարում պ. Արմենակը հաղորդել էր, որ Դավթի երկու արական և երկու իգական դպրոցների հարցաքննությունները վերջացան առանց որ և իցե յառաջագիտություն ցույց տալու։ Պ. Արմենակը հաղորդած տեղեկությունները, որքան վերաբերում է Լիբանյ թաղի երկուսու դպրոցներին, պետք է սխալ տեղեկություններ համարել։ Նորին սրբապետ թեմայի Մուշեղեանց Գրիգոր արքեպիսկոպոսը իւրաքանչիւր առարկայի քննություններին է եղել և ամեն անգամ օրհնական շնորհակալութիւն է արձանագործել դպրոցի գործողներին աշակերտների յառաջագիտություն համար։ Նոյնպէս և հարցաքննության ներկայ գտնվող բոլոր հասարակութիւնը գոչ մնաց։ Առաջիկայի միջոցները վերականգնելու համար պետք է հրապարակա խոստովանել որ պ. Արմենակը Լիբանյ թաղի երկուսու դպրոցների քննություններն ոչ մէկին ներկայ չէ եղել և չէ տեսել, և չէ անակալտ սխալ են իր առած տեղեկությունները։

Յ. Ն. Օրբէկեանց

ՆԵՐՏԻՆ ԼՈՒԻՍԻ

«Новое Время» լուկ է որ մի քանի քաղաքներ կառավարութիւններ խնդիր են տուել, որ անշարժ և շարժական կազմեր ապահովելու ժամանակ, ապահովութեան դաշնադրութիւնը կառավարելու պատգամաւորների համաձայնութեամբ, որոնք ընտրված կը լինեն քաղաքի հասարակութիւնից։

«Голосъ» լրագիրը իր մի բանասիրականի մէջ, որ ստորագրված է Պրոգրամիսի անունով, նկարագրում է ռուսաց վանքերից մինը Սուրբ Եղիշի վանքը և ծանօթացնում է մեզ այն մարդկանցիկ որոնք նախ, որոնք մինչև այսօր կրօնական ազատ կարծիքների պատճառով տանջվում են իրանց ամբողջ կեանքը վանքի բանտերի մէջ, հետո ի կոստան երկ անունով։ Յոգուածագիրը հարկաւոր է համարում վերջապէս կրօնի և խղճի կատարեալ ազատութիւնը։

Չորեքշաբթի օր կարողացանք «Մշակի» միայն կէս թերթը գուրս երեւելոյստեան նոր էինք անցել Դաւթեանց եղբայրների տպարանը։ Այժմ «Մշակը» տպվում է նոր տառերով։

«Մշակի» բաժանորդների թիւը հետզհետեւ աւելանում է։ Այժմ ունենք 1010 բաժանորդ և բացի սրանից օրական ծախում է թիֆլիսում առանձին հատկութիւնով մօտ 60 ֆունտ։ Այսպիսով «Մշակը» ունի այժմ ընդամենը 1070 բաժանորդ։ Ձրխարք ուղարկվող համարները չենք հաշուում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԱՍ ՁԵՐԱԶԻ ՃԱՌԸ

Մեզ ուղարկեցին Մինաս Ձերազի ճառի թարգմանութիւնը, որ նա կարդացել է Անգլիայում, Կորթէն կլուբի մէջ։ Ահա տպում ենք այդ ճառը։

«Տեսքը, ներքեցէք ինձ արայայտել իմ շնորհակալութիւնն երա այս ամենապատուաւոր ակումբին (կլուբ) որ, զիս հրաւիրելով այս շքեղ ժողովին, ուզեց պատուել յանձն իմ հայ ժողովուրդին, որում կը պատկանիմ ծըշմարտապէս բուռած է թէ Ռիչարտ Լոքըրնի պէս մարդիկ չեն պատկաներ միայն այն ցեղին որ զիրենք ծնաւ, բոլոր մարդկութիւնն իրաւունք ունի անոնցմով պարծենալու (Մափահարութիւնը)։ Հետեւաբար, շատ բնական է որ մի հայ թարգման կանգնի իր հայրենակցաց զգացումներուն միջազգային այս խնձրքին մէջ։ Տեսքը, հայ ազգը Ասիոյ մէկ անկեան մէջ կորսուած և վայրի ցեղերէ շրջապատուած, սկսաւ, սակայն իւրացունել եւրոպական քաղաքակրթութիւնը։ Մի ազգ որ կարող է կարգաւ իր յատուկ լեզուով հոմերոս, Կիկերոն, Շէքսպիր և Դանտէ, Շիլլէր և Վերթստէ հիւսիս, չը կարենար մնալ անտարբեր այն մեծ սկզբանց որք այսօր կը մղեն զԵւրոպան դէպի նոր հորիզոններ։ (Մափահարութիւնը)։ Ձեր փաստաբան նա՞ծ սկզբունքը զոր այնքան պերճօրէն կը

բաշտարթի աշխարհի առջև հռչակաւոր այն մարդն, որուն անունը կը կրէ այս կաճաւոր, և զոր Անգլիա, ամեն տեսակ ազատութեանց այս կարգաւոր, առաջինն եղաւ ի գործ դնելու, օրհնեալ է թէ ի մասին իւր նիւթական հետեւանաց և թէ ի մասին բարոյական արդեանց, որովհետեւ, ոչ միայն սպասողներուն համար դիւրամտաշէրի կրնէ ամեն բերքը, այլ և նաեւ, ամենքին շահերն իրաւունք կազմելով, կը ստեղծէ նոր եղբայրութիւն մը ժողովուրդը միջև, և միջմա՞ր այ, յառաջագիտութիւնը անխուսափելի հարկ մը կրնէ իւրաքանչիւր ազգի համար։ (Մափահարութիւնը)։ Տարալոյս չունիմ, Տեսքը, թէ մի օր աշխարհ համաձայն ձեր այդ գաղափարին պիտի դառնայ։ Այդ է առարկայն — մեծ և փոքր առարկայն — որում դուք կը հետամնաք։ Բայց ներքեցէք ինձ ըսել ձեզ, թէ այդ օրը չը կարենար ծաղել մի ուրիշ սկզբունք մը յաղթութեանէն յառաջ — այն է ազգաց ազատութիւնը։ (Մափահարութիւնը)։ Երբ Եւրոպայի մէջ վաճառականութեան ազատութեան խնդիրը վէճի ներքեւ է, դուք որ գայն կը պաշտպանէք, և որ կը ջանաք անոր ընդհանրական գործադրութիւն մը ապ, պետք չէ որ մոռնաք թէ Ասիայի մէջ կը գոյնուի ժողովուրդ մը որ առկաին արտադրելու ազատութիւն չունի, և լնութիւնէն մասնաւոր կերպիւ նպաստաւորեալ երկրի մը մէջ որ խանձարութեան կողմ է հանձարեղ և գործունեաց ազգաց, հարստահարութիւնը կը դատապարտեն արտադրողն ի կործանումն և սպասողն ի սով։ Դուք այժմ կը խնդրէք և կը հռչակէք խաղաղութիւն, և իրաւունք ունիք, զի պատերազմը մարդկութեան համար թշուառութեանց մեծագոյնն է, և, ինչպէս այլուր ըսած եմ, մարդոց մի հաւաքական նախադիմքն է Աստուծոյ դէմ։ Սակայն, Տեսքը, որչափ ժամանակ որ պիտի գտնուի ժողովուրդ մը, ընդունակ յառաջդիմութեան և քաղաքակրթութեան, բարբարոսի մը բանութեան տակ, որ չը դիմէր, որ չուզէր երբեք գիտնալ թէ ինչպիսին ինչպէս կը թելուէ և, խաղաղութիւնը միւսիայն կեղծիք (h.m.e.) մը կարող է լինել, և ո՞՞՞ր մը ընդդէմ մարդկութեան։ (Լսեցէք, լսեցէք) Տեսքը, դուք կը հասկանաք այս ճշմարտութիւնները։ Ձեր սկզբունքը կը մղէ գնեղ անդամադրելի կերպիւ դէպի այս արդիւնքը։ Եւ դուք վստահութիւն ունիք այն հոյակապ անձին վրա որ ձեր փառաւոր հայրենեայ բաղդին կը նախադասէ։ Թոյլ տուէք ինձ յաւելուլ այստեղ թէ Արեւելքի մէջ, նորա պաշտօնավարութեան լուրն ամենամեծ ցնծութեամբ ողջանուեցաւ բոլորն այն տեղերն ուր սիրտերը կը բաբախեն ազատութեան համար։ (Մափահարութիւնը)։

«ГОЛОСЪ» ԼՐԱԳԻՐԻ ԹՂԹԱՅՈՒՅՈՒՆԻՆ

Голосъ լրագրի մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը Երզրումից օգոստոսի 20-ից։

Ռուսների յիշատակը այսպէս անջնջլի է։ Հաղուածիւս տան մէջ չը կայ մի ռուս օժիցիերի յիշատակը։ Եւրաքանչիւր օժիցիերը թողել է ի յիշատակ մի խաչ, պատկեր կամ իր լուսանկարը։ Ռուս օժիցիերները, բացի այդ ընծաներից, աւելի լաւ չէին կարող շնորհակալ լինել այն հիւրասիրութեան համար, որ հայերը արել են նրանց։

Այն տան տէրը, որի մօտ ես լիջել էի, ունէր երկիրը առաջընթաց մասնագործի նախադաս, բժիշկ Բէյուլիզիերի պատկերը։ Պէտք էր տեսնել թէ ինչպիսի օրրութեամբ էր պահվում ռուս բժշկի յիշատակը։ պատկերը հարուստ, ծաղիկներով և պսակներով

զարդարված ունէր շրջանակի մէջ էր գրված։ Տեղացի հայերը չափազանց երախտաւոր էին նրա եռանդուն պատերազմաւոր համար տարրական հիւանդութիւն ներքին դէմ, որն է պատճառը էին սարսափելի կերպով տարածվելու։

Քանի որ ռուսները Երզրումի մէջ էին, հարկըր մինչև վերջին բոլի չէին հաւատում, որ նրանք կերթալին։ Այդ պատճառով հայերը շատ քիչ էին հոգում թիւրքերի հետ նախկին յարեւրութիւնները պահպանելու մասին։ Երբ հայերը յոյսերը անդժաբար խաթելան, նրանք պատրաստ վեցան ամեն տեսակ ընդդիմադրութիւն ցույց տալ թիւրքերի բռնութիւններին։ Թիւրքերին խառնելու համար հայերը վճռեցին նրանց և ոչ մի յանցանքը անպատիժ չը թողնել։

Օրերում մի թիւրք աստիճանաւոր, անցնելով ձիով մի փողոցի ընկաւ ձիուց, որ վախեցել էր մի հայ երիտասարդի յանկարծակի երեւոյց։ Երբ բարկացած աստիճանաւորը մտար կարծրացնում է հայ երիտասարդի վրա, այս վերջինը հանում է լոյր բաժ թէվոլի, և լոյրում է թիւրքի վրա, սպառնալով իսկոյն նրան սպանել։ Թիւրքը պահում է մտար, նստում է ձիու վրա և հետանում է, ասելով. «հայ գիտի զաման»։

Տեսնելով հայերի այդպիսի արամադրութիւնը, թիւրքերը շուտով հանգստացան։ Դեռ մինչև այժմ հայերը անգաղար կրկնում են թիւրքերին թէ հէնց որ կը կրկնվեն առաջիկայ անկարգութիւնները, նրանք իսկոյն կը հրաւիրեն ռուսներին Երզրումը վերջնականապէս զրաւելու համար։ Թիւրքերը այնպէս ձնչված են Ռուսաստանի պատերազմական աղիւցութեամբ, որ մինչև այժմ հաւատում են այդպիսի սպառնալիքներին։

Առհասարակ Երզրումի վիւայթի հայերը ստուր և հրաձիգ զէնքի բաւական մեծ պաշար ունեն։ Այդ պատճառով նրանց յարեւրութիւնները թիւրքերի հետ այժմ բոլորովին փոխվել են։ Ինձ ասացին, որ հայերը զինաւորված ընկերութիւններ են կազմակերպել, որոնք ուշադրութեամբ հետեւում են անցքերի զարգանալուն, որպէս զի հարկաւոր զէնքում իրանց օգնութիւնը աւելի իրական և օգտաւէտ դարձնեն։ Հաւատացնում են, որ Թիւրքաց կառավարութեանը յայտնի է այդ ընկերութիւնների գոյութիւնը, բայց նա ոչինչ չէ կարող անել նա միշտ մի պատասխան է տալու, որ այդ բոլորը անվտանգ և սեփական արահայտութեան համար թիւրքերից և քիւրդերից։

Այստեղ շատ են խոսում Հայաստանին շուտով արվելի ինքնավարութեան մասին և աւելացնում են, որ եղիպոսական առաջին միւսնոր Նուբար-փաշայի իբրեւ հայ, երկրի անփութիս կառավարիչ կը նշանակվի։ Երեւի այդ ենթադրութիւնը նրա հետեւանք է, որ Նուբար-փաշա նորերում մեծ փողեր նուիրեց Հայաստանի սովետներին։ Պատուաւոր ծերունիները ասում են, որ Նուբարի, կամ մի այլ փաշայի նշանակելը հայերին չէ բաւականացնի։ Ահա ինչ ասաւ ինձ ծերունիներից մէկը այդ լուրի առիթով. «Ոչ, Նուբար փաշա թէպէտ լաւ մարդ է, բայց նա էլ չէա կրողներին է, իսկ թիւրքաց ֆեոսերը մեզ բաւական ձանձրացրել են։ Եթէ հարկաւոր կը լինի անփութիս կառավարիչ ունենալ, աւելի լաւ է մենք յառաջդիմական մի քայլ կաննել և մեր «ժառանգական» կառավարիչ ահա ինչպիսի մարդ կրնորենք։ Այս ասելով ծերունին մեկնեց իր ձեռքը դէպի հիւսիս և ամենքը նրան հասկացան, ծերունին անկարծում էր այն երեւել մարդուն, որ երկու տարի առաջ

յաղթում էր Հայաստանի մէջ, իսկ այժմ աջացնում է Ռուսաստանի խաղաղ առաջագիտութիւնը։ Այդ մարդու անունը այստեղ զիւթակտն աղիւցութիւնն ունի։

Այստեղի անդիլական հիւպատոս պ. Տրոստեր նորերում ուղեորվեցաւ Վան, որտեղ ինչպէս ասում են, անհանգստացնող զարժեր են պատրաստվում։ Որովհետեւ այդ ճանապարհորդութիւնը կապված է անձնական վտանգի հետ, այստեղի ռուսական հիւպատոսը չը հետեւեց Տրոստերի օգնեալին։ Վանի հիւպատոս Վլէյաօսի առաջին զեկուցումները ստանալուց յետոյ, պ. Տրոստեր անյապաղ նստեց ձիու վրա և թիւրք սովետներին ուղեկցութեամբ ուղեորվեցաւ Վան։

Ղարսի նահանգից այս կողմը գալով թիւրքերը գրեթէ բոլորն էլ ուղեորվում են հետաւոր Արեւելք, դէպի Դամասկոս։ Հայերը ի հարկէ զբանից հիացած են և գաղթականների ձանապարհը օրհնում են։

Պրանսիական նոր հիւպատոս պ. Լաւկոստ հառաւ այստեղ։ Նրա մասին դեռ ոչինչ չէ կարելի տեսլ, որովհետեւ նա դեռ ոչինչի մէջ չէ խառնվել։ Բայց սկզբնական ապաւորութիւնների համեմատ ամենքը ասում են, որ նա մոլեռանդ կաթողիկ չէ, ինչպէս Ֆրանսիական նախկին հիւպատոս ժիլերը և որ նա ազատամիտ մարդ է։ Քաղաք մտնելու ժամանակ նա հանդիպով ընդունվեց հայ երիտասարդութեանց, որին նա ասաց. թէ ինքը եկել է պաշտպանելու «ոչ թէ կրօնական սկզբունքները, այլ ազգային իրաւունքները»։

Նորերում ես ներկայ էի հայերի ազգային մեծ տանին, որ իւրաքանչիւր տարի կատարվում է Քաջուայոյ լեւան վրա։ Այդ լեւան վրա սկիզբ է առնում Եփրատ գետը, որ պողաւորում է Հայաստանի ահագն տարածութիւնը։ Այդ պատճառով այդ զետի սկիզբը կրօնական կուլտ է կազմում։ Աւանդութիւնը ասում է, որ այդ լեւան մէջ թաղված էր կապալաններից հալածված խաչը, որի վրա Փրկիչը խաչված էր և, երբ կապալանները փորում էին հողը բրիտանական սրբութիւնը ձեռք բերելու և պղծելու նպատակով, փորված տեղից յանկարծ ջուր բխեց և բոլորն խեղտեց իր հեղեղներով։ Ահա այդ հեղեղները սկիզբ տուին Եփրատ գետին, որ մինչև այժմ էլ իր ոյժերը նրանցից է ստանում։

6,700 ֆուտ բարձրութեան վրա աչքին առաջ բաշվեցաւ փոքրիկ բլուրներով շրջապատած մի տափարակ։ Որովհետեւ տափարակից զանազան ուղղութիւններով սկիզբ են առնում չորս գետեր՝ Տիգրիս, Եփրատ, Աւրաք և Զօրօն, այդ պատճառով երկրի աւանդութիւնը ասում է, որ այդտեղ է եղլ բլրիկական եղեմը։ Պատմում են, որ մի Ֆրանսիացի մի քանի տարի առաջ ուղեւորվեցաւ Հայաստան միայն այն նպատակով, որ անձամբ տեսնի Ագամի կալուածները, բայց զարմացաւ չը գտնելով այդտեղ բլրիկական բոյսեր։ Ինձ մինչև անգամ ցոյց տուին այն թարգմանչին որ օգնում էր իր ձեռնարկութեան համար ահագին փողեր ծախալ Ֆրանսիացուն։

Այստեղի հայուհիները չափազանց գեղեցիկ են։ Նրանք բաց երեսով են ման գալիս և հագնում են ինքնուրոյն, ազգային հագուստ, որի յառկանին է կազմում կարմիր, կամ մուրա գոյնի, ոսկէ զրծերով կարված զոգնաք։ Գլխի զարդարանքը շատ հարուստ և գեղեցիկ է։ Սեահերները շատ քիչ են, մեծ մասամբ այստեղի հայուհիները շէկահերներ են, մեծ և կապոյտ աչքերով։

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՓԵՐՈՍ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ» պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուէրէ բաժանորդաց: Այս տետրին մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութն՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազեան արքեպիսկոպոս, Միքայէլ Միսնասարեանց, Նուբար-Փաշա, Կարին բաղաբ, Պետրբուրգայ Հայոց եկեղեցին, Սրճարան Հայոց ի Կարին, Սովեալ Հայ ընտանիք ի Վան, Վան բաղաբ, Կազմ Հայերէն աւետարանին, Նուիրեայ Նորին Կայսերական Մեծութեան ի Կաթողիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են այսուհետեւ իւրաքանչիւր տետրի համար 1 ռ. 50 կ:

Տփլիսում ստանալ կարելի է պ. Օ. Գրիբորեանցի և Կենդրոնական գրադատանոցներում:

Հրատարակիչ Ջարմայր Մ. Մսերեանց

Հայոց պատմութիւնը իսկական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարեւոր մի գիրք է «Հիւսուածք բանից նախնի պատմագրաց հայոց» 3 հատոր, աշխատատա. Կ. Կոստանէանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան սկիզբն և Վարդանանց ու Վահանանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհագրոր, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարեւոր ծանօթութիւններ, ժամանակագրական աղիւսակներ և յաւելումներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ռ.

ա. և բ. հատորը միասին 2 ռ. 25 կ., բ. և գ. հատորը միասին 2 ռ. 25 կ.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից աւել աւանդին 10% զեջումն կը դրուի. գնելու համար դիմել—Սէքսանդրապոլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանէանցին.

Տփլիս—Կենդրոնական գրադատանոց:
Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփորան պ. Մեղքոն Փանեանցին:

5—10

Մի Հայ դերաստուն, որը բնակվում է Մայիսպոլի, հրաւիրում է Հայ օրիորդ իմացող Հայերէն, Ռուսերէն և Գաղղիերէն եզրուներ, ոյսպէս և երաժշտութիւն, անական ուսուցչուհի տեղը ընդունելու. 600 ռուբլ տարեկան ուժիով: Ծանապարհի ծախսը առնում է զերբաստուելու իւր վրա: Ցանկացողները իրանց պայմաններով կարող են դիմել նամակով Վ. Մայկոպ, Կյո. օբլ. Նիկոլայ Իոսիֆովիչ Ալիխանով.

4—10

Թեմական վերատեսուչ Գ. ԲԱՐՈՒՄԻԱՆ ԲԱՆ յայտնում է, որ նա այժմ բնակվում է Կոնկի, Սիմֆոնիական փողոց, տուն Սարգիս Ալեքսանեանի №16:

3—4

ԱՆԳԼԻԱՆ ԻԱՆՈՒԹԻ մէջ ստացվել է մեծ քանակութեամբ Թէթ ուղղակի թէյեր, դորճներ, նոյնպէս ՅԵՏԱՐԱՐ ՄԱՐԿԵԶԻԱ Ծարաւութեան դէմ և կարբոնէն փօշի և ՀԵՂՈՒԿ տարափոխիկ հիւանդութիւնների դէմ:

8—10

Այս օգոստոսի 20-ից Օրբէլ Օրբէլեանցի և Կարապետ Բէլախեանցի մասնաւոր ուսումնարանում կը սկսուեն նորիկ աշակերտներ ընդունելութիւն: Ուսումնարանը պահպանում է զինթօթիկ և ընդունում կիսաթօշակ աշակերտներ, պարագետերով նրանց ծփխիսու բոլոր միջնակարգ դպրոցների առաջին և երկրորդ դաստանց համար:

5—6

ՄԻ ՀԱՅ ՈՏԱՆԻՔՈՒՄ ընդունում են ԳԻՇԵՐՈՒԿՆԵՐ արժան վճարով 8—15 տարեկաններին, ԳԱՌԱՌԱՅԻՆՆԵՐԻՑ: Հարցնել «Մըշակի» խմբագրատանը:

3—4

ԹԻՖԼԻՍԻ ՊՐՕԳՆԻՄԱՅԻԱ ՎԵՐԱՅՐԱՄ, Հայոց ծխական և մասնաւոր ուսումնարաններում 8 ՏԱՐԻ դասախօսութիւն արած մի ԵՐԵՄԱՍՐԻ ներկայ սեպտեմբերի 1-ից ցանկանում է ՈՒՍՈՒՅՁԻ ՊԵՏՏՈՆ տանալ բացառապէս ՌՈՒՍՍՅՅ լեզուից և ՌՈՒՍԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ, ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և զաւառներում: Տեղեկանալ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ կամ Էնֆիանջեանցի ԳՐԱՎԱՅԱՍՆՈՑՆԵՐՈՒՄ:

21—22

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԵԱՆ ՕՂԻԻ գործարանի պահեստ ԹԻՖԼԻՍԻՄ ՇԱՌԻՐ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվեցին ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետեւալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՁԻ և ԲՈՒՄԵՐԻՆԻ: Նիշը ամանով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշան աւուր զիջումն է անվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՅ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՅՐԱՔԱՅԻ ՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վառ չեն: Պ. պ. գնողների ուղարկութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Միքայէլեան կամուրջի վրա, Յենարալնայա հիւրանոցի տակ, Լիխաթնիսկո տանը, Վօրոնցովի արձանի դիմացը:

5—8 (2 շաբ.)

ԲԺՇԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԳՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌԱՐՈՏԵԱՆ ԳՆԻՑ ՄԻՆՁԵՐ 1 ԺԱՄԱՆ

Երկուշաբթի. Գաղթականի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեի և Գօրալիվի ներքին հ., Բիւլաբեանց խիւրդիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վերնական և կաշու հ.:

Երեքշաբթի. Միսկիվի խիւրդիական հ., Միւրօշնի չէնկո ներքին, կրծքային և երկխաների հ., Կրիգէր ներքին և երկխաների հ., Լիսիցեի ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կաշու և երկխաների հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեի ներքին հ., Շտեմբօրսկի վերնական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գաղթականի մանկաբարձական և կանանց հ., Միւրօշնի չէնկո ներքին, կրծքային և երկխաների հ., Լիսիցեի վերքին հ., Բիւլաբեանց սիֆիլիս և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Միսկիվի խիւրդիական հ., Լիսիցեի ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երկխաների հ., Շտեմբօրսկի և Աստուածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգէր ներքին և երկխաների հ., Լիսիցեի վերքին հ.:

Առաջնաբայթ Օրբիստ աղբատ հիւանդանոցին բժշկանոցի տոմսակով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի զրեկտօր Լիսիցեի:

3—4

Ներկայ տարուայ սեպտեմբերի 15-ին Թիֆլիսի նահանգական դատարանում (Օկրուժնոյի Սուդում, լինելու է տորդ (աճուրդ) հանդուցեալ Արկադեայ Գամազովի հօդերը ծախելու համար, որոնք գտնվում են Բորչաուի Սարաչու գիւղում, Շուլաւէրի մօտ: Մանրամասնութիւնը կարելի է կարդալ «Կաբաշ» լրագրի № 186 Տէրութեան յայտարարութեան մասնում:

Մի Հայ երիտասարդ կանանում է գործակատար լինել առհասարակ մանուֆակտուրի մագաղինում:

Ցանկացողք իրենց հասցէն կարող են թողնել «Մըշակի» խմբագրատանը:

1—5

ՖԻՆԱՆՍԻՍԻ քոյրեր ընդունում են ՕՐԻՆՈՒՆԵՐԻՆ ժամ 9—1 ՖԻՆԱՆՍԻՍԻՆ, ԳԵՐՄԱՆԻՆԻՆ ԼԵՂՈՆԵՐԻ և ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐ տալու համար: Սօթլակի, փոռն ՕՐԻՆԻՍԻ № 14:

1—3 (5)

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎԱԿԱՅԱ ՊԵՏԱՐԵԱՆ ՅԻՆ կից կը բացվեն ՍԵՆՏԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՅԵ, ՇՈԿՈՒՄԻ, ՔԵՑ և պատրաստված հանրային զանազան ջրեր:

39—40

Ընդունում են ամեն տեսակ պատուէրներ ԿՈՆՖԵԿՏԵՐԻ, ՊԵՐՈՒՆԻ, ՍՈՒՐԻՍԻ զանազան տեսակի, մուշաբի, և ընտիր տեսակ ՖԻՆԻՍԻՍԻ ԿՈՆՖԵԿՏԻ, և ամեն տեսակ կանդիտերի պարանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խղճմտաբար, ցանկացողք կարող են դիմել ինձ հետեւալ հասցեով, Въ Типлист, МАТИРОСУ АХНА-ЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦЕ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ փոստայի կոնֆլիտ պահանջողներին ծանապարհածախքը ինձ վրա եմ առնում:

Մ. Հախնապարեանց.

2—50

Գուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդիկեանի հետեւալ դասաղբերը.

1. Ազգային Բնատեսական աշխարհը և Արքեպիսկոպոս (առաւելու ուսմանը և ընթերցմանը) . . . 25 կ.
2. Նոյնը ուսուցիչներին համար բացատրութիւններով (հանդիւն) . . . 75 կ.
3. Ազգային Գիւցաղական աշխարհ (բ. տարուայ ուսմանը և ընթերցմանը) . . . 30 կ.
4. Նահապետական և Հայրենի աշխարհ (բ. տարուայ ուսմանը և ընթերցմանը (բ. տպագրութիւն) . . . 65 կ.